հայկական գործերի մասին, նոյնպէս եւ նորին կայսերական բարձրութեան պատասխանագրութեան: Կատարելապէս բաժանում եմ այդ երկու վաւերագրերի մէջ արտայայտուած տեսակէտները Թիւրքիայից զրաւուած հայկական նահանգների ապագայ կազմակերպութեան մասին»:

Այսպիսով, հայկական նահանգների ապագայ կազմակերպութեան խնդիրը անցաւ կայսերական կառավարութեան բոլոր կարեւոր հիմնարկութիւններից: Միջազգային համաձայնութեամբ գրեթէ ամբողջ Թիւրքահայաստանը զրաւուեց Ռուսաստանից, որը որոշեց դարձնել նրան իր անբաժան մասերը, որպիսին էր, օրինակ, մի Սարատովի կամ Վոլոգդայի նահանգ: Հայաստանը, որպէս ազգային-քաղաքական միաւոր, Ռուսաստանի համար գոյութիւն չունէր:

Հարիւր տարի առաջ, խաբելով հայերին, Նիկոլայ Ա-ի Ռուսաստանը բռնագրաւեց Արարատեան Հայաստանը: Հարիւր տարի յետոյ, Նիկոլայ Բ.-ի Ռուսաստանը, նոյնպէս խաբելով հայերին՝ պատրաստւում էր բռնագրաւել Բարձր Հայքը, Տարօնն ու Վասպուրականը:

Սակայն, չարաթը աւելի շուտ եկաւ, քան ուրբաթը. ցարական բռնակալութիւնը խորտակուեց եւ նրա դահի փլատակների տակից «հաղար ազգաց ազատութիւն ծագեցաւ»:

Բոլորովին այլ ընթացք ստացաւ եւ հայ ժողովրդի ճակատագիրը...

* * *

Մենք օգտագործեցինք «Ասիական Թիւրքիայի բաժանումը» գրքի նիւթերի մի մասը միայն, ա՛յն, որ վերաբերւում է հայերին:

Գիրքը հարուստ է ուրիշ վերին աստիճանի հետաքրքրական նիւթերով, օրինակ, արաբական ապստամբութեան կազմակերպումը, բանակցութիւնները Պոլսի եւ Նեղուցների համար, Իտալիայի պատերազմին մասնակցելու պարագաները, ձեմալ փաշայի հետ ծրագրուող անջատ հաշտութեան բանակցութիւնների մանրամասնութիւնները եւայլն: Այդ հարցերից իւրաքանչիւրը լուսաբանուած է բազմաթիւ վաւերագրերով եւ ունի պատմական առաջնակարգ արժէք:

Մեզ համար այստեղ առանձին հետաքրքրութիւն են ներկայացնում այն վաւերագրերը, որոնք պատկերացնում են ռուսական քաղաքականութեան մի ուրոյն արտայայտութիւնը, որը, առաջին հայեացքով, թւում է հակառակն, բայց որը, իրապէս, օրգանական շարունակութիւնն է Պետրոս Մեծի ընդգծած ուղիի: Այս հարցով էլ կը փակենք ներկայ յօդուածը:

Խօսքը Ռուսաստանի վերաբերումի մասին է դէպի Թիւրքիան:

Ռուսական տէրութիւնը դարեր շարունակ հարուածել է Օսմանեան կայսրութեան, ձգտել է կոտրել սուլթանական զօրութեան ոյժը: Բայց ահա հասնում է մի վայրկեան, երբ Թիւրքիան ռուսների համար դառնում է պաշտպանութեան առարկայ. ռուս դիւանագիտութիւնը մտահոգուած է Թիւրքիայի ամբողջութիւնը ապահովելու խնդրով:

Նեղուցներին եւ Հայկական Բարձրաւանդակին տէր դառնալուց յետոյ՝ Ռուսաստանն այլեւս հաշիւ չունի Թիւրքիայի հետ: Ընդհակառակը, Թիւրքը նրա համար դառնում է անհրաժեշտ գործօն իր սահմանների պաշտպանութեան՝ ընդդէմ Անգլիայի ու Ֆրանսայի: Այս հոգի վրայ սկսում է ընդնշմարուել ռուս-Թիւրքական բարեկամութիւնը, որը, քիչ յետոյ, բոլշեւիկների օրով, երեւան պէտք է գար այնպէ՛ս տիրական ուժգնութեամբ:

Այս տրամադրութիւնը տեսնում ենք ռուս-Ֆրանս-անգլեւ իտալական բանակցութիւնների ժամանակ՝ Թիւրքական ժառանգութեան մասին, 1916 թուին:

Իտալիան յամառ կերպով պահանջում է Իզմիրը, ամբողջ Ասալիան Գոնիայով միասին, Կիլիկիան Մերսինով հանդերձ: Ֆրանսան նոյնքան յամառութեամբ հակառակում է Կիլիկիայից որեւէ կտոր Իտալիային տալու մտքին: Ռուսաստանը պաշտպան է կանգնում Թիւրքական շահերի:

Արտաքին գործոց նախարարի պաշտօնատար Ա. Ներատովը 1916 թ. 12-23 Նոյեմբ. հեռագրում է Փարիզի եւ Լոնտոնի դեսպաններին.

«Ես յայտնեցի իտալական դեսպանին իմ անձնական կարծիքը, որ մենք կը նկատենք